



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

06 Մարտի 2017 թ. № 75 - Ա/1

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի № 4-Ա/1
ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի՝ *հրամայում եմ՝*

1. Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2017 թվականի հունվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն» 2017 թվականի մրցույթի կանոնակարգը հաստատելու մասին» № 4-Ա/1 հրամանի № 1 հավելվածի 24-րդ, 25-րդ և 28-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:




Հ. ՌՈՍՏՈՄՅԱՆ

«24. Վարժություն N° 1. Փոխանցվազք արգելքների հաղթահարումով

Թիմի կազմը՝ 5 տղա և 5 աղջիկ

Արցավարի հրահանգի համաձայն 1-ին մասնակիցը վազքով մոտենում է պարկին, անցնում է պարկի միջով (մեկնարկից պարկ հեռավորությունը՝ 5 մետր, պարկի երկարությունը՝ 3 մետր, պարկի տրամագիծը՝ 1 մետր), ոլորապտույտ վազքով արագ անցնում է 5 կանգնակների միջով (պարկից մինչև 1-ին կանգնակը՝ 2 մետր, կանգնակների հեռավորությունը՝ 1,5 մետր, վերջին կանգնակներից մինչև գուրգ՝ 5 մ), վազքով մոտենում է գուրգին, շրջանցում և ուղիղ գծով արագ վերադառնում մեկնարկային գիծ, ձեռքի հպումով էստաֆետը փոխանցում հաջորդ մասնակցին: Նույնը կատարում են թիմի բոլոր անդամները:

Հաղթող է ճանաչվում այն թիմը, որը բոլորից արագ է ավարտում վարժությունը (վայրկյան):



Ծանոթություն

- Յուրաքանչյուր մեկ կանգնակ վայր զցելու դեպքում արդյունքին ավելանում է 1 տուգանային վայրկյան:
- Պարկի միջով անցումը պարտադիր պայման է. հակառակ դեպքում կտրվի 2 տուգանային վայրկյան:

25. Վարժություն N° 2 Խաղային փոխանցվազք

Թիմի կազմը՝ 5 տղա և 5 աղջիկ

Առաջին մասնակից երեխան (տղա) մրցավարի հրահանգով վազքով մոտենում է դիմացի գուրգին (մեկնարկից գուրգ՝ 5 մ) վերցնում է դրված օղակը (օղակի տրամագծի չափը՝ 25-30 սմ), ոլորապտույտ վազքով արագ անցնում է 5 կանգնակների միջով (գուրգից մինչև 1-ին կանգնակ՝ 2 մետր, կանգնակների հեռավորությունը՝ 1,5 մետր, վերջին կանգնակից մինչև գուրգ՝ 7 մ), վազքով մոտենում է գուրգին (30-40 սմ բարձրությամբ), օղակը գցում է գուրգի վրա և ուղիղ գծով արագ վերադառնում մեկնարկային գիծ, ձեռքի հպումով էստաֆետը փոխանցում հաջորդ մասնակցին: Նույն վարժությունը կատարում են թիմի մյուս 4 տղաները: Վերջին մասնակից տղան վարժության ավարտից հետո